

Ի. ՄԻՐՁՈՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՕՏԱՐԱԶԴԻ
ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

Հանրահայտ է, որ Սայաթ-Նովայի խաղերում կան դեռևս չմեկնարանված բառեր, վիճելի տողեր: Հիշյալ հոգվածում մեր նստատակն է տալ դրանցից մի ղգալի մասի մեկնաբանությունը: Երգչի այս կամ այն օտարազգի բառի ճիշտ մեկնաբանման համար մենք դիմել ենք զանազան աղբյուրների՝ միջնադարյան աշուղներ և երգիչներ, միջնադարյան հեքիաթներ և խաղիկներ, թիֆլիսահայերենի քաջատեղյակներ Գ. Սունդուկյան և Գ. Տեր-Աղեքսանդրյան, պարսկերեն-հայերեն բառարաններ և այլն: Հաճախ, անհրաժեշտության դեպքում, մեղ օգնության է եկել հենց ինքը՝ Սայաթ-Նովան՝ իր գրական ժառանգությամբ:

Նստատակահարմար ենք գտել առաջնորդվել անվանի սայաթնովագետ Մ. Հասրաթյանի կազմած, ծանոթագրած և խմբագրած «Սայաթ-Նովա» գրքով (Երևան, 1963 թ.):

Սկսենք այդ գրքում զետեղված խաղերի հերթականությամբ.

ԽԱՂ 4-ի ա տան ա տողի

«Շախաթայի» բառը համարվում է անմեկնելի բառ: Ըստ Գ. Ախվերդյանի հենթադրություն, դա երգի եղանակ է, ըստ Մ. Հասրաթյանի՝ «բառը համանիշ է աստծո կամ ինչ-որ բարձր ոգու գաղափարին» («Ս. Ն.», էջ 235):

Սայաթ-Նովան «շախաթայի» բառը, բացի նշյալ խաղից, օգտագործել է նաև աղբյուրներին գրված հինգ խաղերում (Դավթարի ա, բ, գ, դ էջեր): Իրար հետ համադրելով այդ խաղերը, նկատում ենք, որ «շախաթայի» բառը յուրաքանչյուր խաղում տարբեր գրությամբ է: Օրինակ՝ ա էջում գրված է «շախայի», բ էջում՝ «շահխաթայի», գ էջում՝ «շախաթաի», դ էջում՝ «շախաթաիա»: Այս փաստը մեզ բերում է այն ենթադրության, որ հիշյալ խաղերը բուն բնագրեր չեն, այլ արտագրված են ուրիշ մարդկանց կողմից, որոնք շահականալով բառի իմաստը, աղավաղված ձևով են գրել: Մեզ թվում է, որ գրության ամենաճիշտ ձևը Դավթարի բ էջինն է՝ շահխաթայի:

Մինչ բառի ստուգաբանությանն անցնելը, նկատենք, որ «շահխաթայի» բառի տակ երգիչը հասկացել է կոնկրետ, որոշակի մարդու, այն էլ իր գյողալին, որը շատ սիրուն է, իրեն՝ երգչին, սիրո «կայծակով» խփել է, և այդ սերը «հաստի կրակ ունի», որ ոչ միանգամից մարդուն վառում է, ոչ էլ սրտից անցնում, նույնիսկ ծովն ընկնելու դեպքում էլ հովանալու հնար չի լինում (խաղ 4): Որ իրոք «շահխաթայի» բառի տակ երգիչը նկատի ունի նազանի գյողալին, է՛լ ավելի ակնբախ երևում է Դավթարի բ էջի աղբյուրներին հետևյալ խաղից.

Դեգիլար քի շահխաթայի, շաղիրըրամ շահի շահ,

Ղալխար բու դիվանայ քովլում, դուշար դարդա գահի գահ,

Աչրլըփ տուր ղիլիփլարուն գուլ, սուսամբար դուր, մադաթ,
 Անջախ շափաղինի գորգում, բիլմամ նա զար դուր, մադաթ,
 Այլունդաքի ղզըլ ավա օղոսսուն դարմանի դուր,
 Ղոինուն դաքի շամամլարըն թազա նուգբար դուր, մադաթ:
 (Ասացին թե շահխաթայի, ես կանչում եմ շահիշահ,
 Ինձ դիվանա է դարձրել, վշտի մեջ գցել,
 Բացվել է խոպուպների վարդը, որը սուսամբարի հոտ ունի,
 Հաղիվ ցուքը տեսա, չիմացա այն ինչ ոսկեթել է (խոսքը գյողալի
 ոսկեգույն մազերի փայլի մասին է):
 Ձեռքում գտնվող կարմիր խնձորը ընկերոջ համար (կամ յարի)
 դարման է,
 Մոտի շամամները դեռահաս պտուղներ են*:

Մադաթ պրսկ.՝ «օգնություն», «Հախ մադաթ», «տեր աստված, փրկիր ինձ»:

Այժմ բառի կազմության մասին: Դրա բանալին գտնելու համար դիմենք աշուղներ նալբանդ Օղլուն, Դյուրջի Ակոբին և միջնադարյան երգիչ Նադաշ Հովնաթանին:

«Քու տեսակըն ոչ ով չկայ,
 Թե՛ ենգիդունեմեն կուգայ,
 Ենգիդունիա չի ճարվի.
 Խաթայ-խութայեմեն կուգայ,
 Ենգիդունիա-շահլար-շահի,
 Շատ սեյր արի խաթայի,
 Ես էլ չտեսա քու թային» (Գ. Ախվ., «Հայ աշուղ-ներ», էջ 489):
 «Նոր շապիկ ես հագել, լավ բարակ քեթան,
 Էլ չըկայ քեզ նման խաթայի-խութայում»
 (ն. տ., էջ 234):
 «Խաթայի գոտիկ, շապիկդ մավ,
 Քաղցր ծիծաղիս, որպես կաքավ»
 (ն. Հովնաթան, «Բանաստ.», 1951, էջ 6):

«Խաթայի-խութա»-ն բառարանում մեկնաբանված է «Զինաստան» (Գ. Ախվ., «Հայ աշուղներ», էջ 324):

Ինչ ենք նկատում. այն, որ մեր աշուղների (ինչպես և ժողովրդի) պատկերացման մեջ ենգիդունյան (Ամերիկա, նոր աշխարհ) և խաթային (Զինաստան, ռուսերեն գրությամբ՝ ԿԻՏԱՅ) հեռավոր, անհաս, հեքիաթային երկրներ են համարվել, ամեն լավի, գեղեցկի, հազվագյուտի հայրենիքը (հիշենք «չնաշխարհիկ» բառի առաջացումը՝ Զին աշխարհիկ՝ շինական փոքրիկ աշխարհ — փխբ. աննման, չտեսնված գեղեցիկ):

Ինչպես որ նալբանդ-Օղլին էլ իր սիրուհուն ասում, որ նրա նման ոչ ենգիդունյումը կա և ոչ էլ խաթայում (Զինաստան). այնպես էլ Սայաթ-Նովան է իր գյողալին համեմատում գեղահարաշ երկիր Զինաստանի թագավորի հետ, անվա-

* Թարգմանությունը տողացի է:

նում նրան շահ հաթայի (սորբա Ձինի): Հետևաբար, բառը պետք է գրել ան-
ջատ, ըստ որում ոչ թե շահ-ը մեծատառով, այլ՝ հաթային:

Զուգադրենք Գյուրջի Ակոբի և Սայաթ-Նովայի հետևյալ երկու տողերը.

«Ննգիդունյա-շահլար շահի,

«Ասացին թե շահիաթայի, ես

Շատ սեյր արի հաթայի,

կանչում իմ շահի շահ»:

էլ շտեսա քու թային»:

«Շահլար շահի»-ն՝ կայսերաց կայսր (տե՛ս Գ. Ախվերդյան, «Հայ սշուղ-
ներ», էջ 52) և «շահի շահ»-ը նույնանիշ բառեր են, երկուսն էլ արքայից-ար-
քա, շահնշահ իմաստն ունեն:

Եթե Գյուրջի Ակոբը իր սիրուհուն անվանում է «Ննգիդունյա շահլար շահի»
(նոր աշխարհի՝ Ամերիկայի արքայից-արքա), ապա Սայաթ-Նովան իր գյողա-
լին անվանում է Ձինաստանի արքայից-արքա՝ շահ հաթայի:

Վրացերեն 20-րդ խաղում մեծ երգիչը նազանի գյողալին նոր Ձինաստան
է անվանում:

«Մուն մի թաղա Ձինումաչին, ինչպես շասեմ յարիդ երնեկ»:

Ուրեմն՝ «շահիաթայի»-ն (ծիշտը՝ շահ հաթայի) բառացի նշանակում է
«արքա Ձինաստանի»:

ԽԱՂ 6. էջ 13-ի դ տուն.

«էդ փրսանդով համ իս անում,

Դաստամազոտ նամ իս անում,

Ապա խաթրրտ ջամ իս անում»:

«Խաթրրտ» և «ջամ» բառերը անջատ գրվելով, դարձել են անիմաստ:
Դրանք «խաթրջամ» բառի բաղադրիչ մասերն են, հետևաբար պետք է գրել միա-
սին: Եթե նախորդ տան մեջ երգիչն ասում է, որ իր յարը «ջադուքար» է (կա-
խարդ), հազար ու մի «փրսանդով» (ձևերով, հնարներով) իր հոգին հանում է,
ապա հիշյալ տան մեջ ավելացնում է, որ այդ «փրսանդով» իրեն «համ» է ա-
նում՝ վիշտ, տխրություն է պատճառում, իսկ հետո՝ «խաթրջամ անում»՝ հու-
սադրում, հանգստացնում: Այլ կերպ ասած, յարը իր հոգու հետ խաղում է:

Նույն խաղի 15-րդ էջի ա տուն.

«Սոցիտ մեչըն շայիր շիման,

Ձի ման ասիմ,

Մուրախաս իմ,

Սըրտումս ունիմ իղրար, իման»:

«Ձի ման»-ը մեկնաբանված է «ինչ ես» (պրսկ. շի մէն — «Ս. Ն.», էջ 308):

Խաղի կառուցվածքը, ինչպես և տողի իմաստը մեղ հուշում է, որ «շի
ման»-ը պետք է գրել միասին՝ «շիման» (մարգագետին — աղբբ., պարսկ.): Եթե
նախորդ տողում գյողալի ծոցը պատկերավոր ձևով համեմատում է «շայիր-
շիման»-ի հետ, ապա հաջորդ տողում կրկնում է բառը՝ հույզն էլ ավելի շեշտ-
ված, ցայտուն դարձնելու համար: Ուստի՝ երկրորդ՝ կրկնվող «շիմանի» վրա
պետք է լինի բացականչական նշան՝ կարոտի, բաղձանքի հույզն ընդգծելու հա-
մար:

Նույն տան «մուրախաս»-ը մեկնաբանված է «Արձակուրդ ստացած» (էջ
202): Դա պարսկերեն «մորախաս» բառի այլ առումն է՝ «թուլատրված մի տեղ
էրբեր 3—6

մտնելու» (Միլլեր¹, էջ 481)։ Երգիչը գյոգալին ոչ թե ասում է «արձակուրդ տուր ծոցիդ շայիր-շիմանր մտնելու», այլ՝

«Թույլ տուր», շմոռանալով ավելացնել, որ ինքը կմնա շափի սահման-ներում, կսանձի իր կամքը, որքան էլ որ դժվար լինի իր համար։

«Բղրար իմանեն շանցկենամ,

Բերնումս զընիմ սանձ կենամ,

Սանձահարիմ,

Սիրտս վարիմ»։

Ի դեպ, մեր հալկական ժողովրդական հեքիաթներում ժողովուրդը «Մուրախաս»-ը օգտագործել է նույնպես «թույլ տուր, թույլտվություն» իմաստով։

«Մուրախաս արա, էթանք մեր բանին» («Աղվեսը, գելը, արջը և զմրուտ զուշը» (Հայկ. ժող. հեքիաթներ, հ. 1, էջ 259)։

ԽԱՂ 8-ի դ տան դ տողի «շահանդազի «բառը գրված է շղայով՝ համարվում է անմեկնելի բառ։ Մեր կարծիքով, հիշյալ բառը պետք է անջատ գրել՝ «շահ անդադի»։ «Անդազե»-ն պարսկական անդադ-անդախթան (նետել) բառը չէ, ինչպես հարցականով ենթադրում է Մ. Հասրաթյանը («Ս. ն.», էջ 395), այլ թիֆլիսահայ բարբառի «անդազե» բառն է՝ «խոսք ասացվածք» իմաստով։ «Բաս ինչե՞մեն է, վուր ասում ին, թե ջուրը կուտանի ու ծարավ հիտ կու բերե, կոսե, ինչի՞ վրա է ասած էս անդազեն, խափելու վրա՞, թե խելքի վրա» (Դ. Սունդուկյան, Երկեր, հ. 1, էջ 72)։

Որ իրոք երգչի վերոհիշյալ տողի «անդազ» բառը նույնպես «խոսք, ասացվածք» իմաստով է, մեզ հուշում է հենց նույն տողի առաջին հատածում օգտագործված «շունքի խոսկրտ անց է կենում» արտահայտությունը։ «խոսք» բառը երկրորդ անգամ նույն տողում չկրկնելու համար երգիչը օգտագործել է դրա համանիշ բարբառային ձևը։ Երկտողը հասկացվում է այսպես. «Յա՛ր, ես քեզ բարևում, իսկ դու չես պատասխանում՝ «դալ իս անում» («Ղալ»-ի մասին քիչ հետո կխոսենք), որովհետեւ խոսքդ անցնում է նշանավոր, հայտնի շահի («բելու շահ») «անդազ»-ի նման՝ խոսքի նման։

Նույն տան «դալ» բառի մեկնաբանությունը վիճելի է։

Յար, յիս քիզ բարով իմ տալիս, շուռ իս գալիս, դալ իս անում։

«Ղալ»-ը Գ. Ախվերդյանը համարել է անմեկնելի բառ, Գ. Լևոնյանը մեկնաբանել է «աղմուկ» (ղալմաղալ բառից), Մ. Հասրաթյանը՝ «գլխացավանք, նեղություն, հուզմունք, անհանգստություն կամ վեճ, խոսք ու դրույց, քննադատություն, զալմաղալ» (էջ 297)։

Լա՛վ, հոգեբանական մի հարց. ինչո՞ւ պետք է յարը երգչի հեղ ու խոնարհող շունին պատասխանի զալմաղալով։ Ընդհակառակը, երգչի խաղերում կարմիր թելի պես անցնում է այն մտտիվը, որ գյոգալը չի խոսում իր հետ, ինքը կարոտ է նրա մի բառին»։

«Տեսնելիս էլ մի բառ էլալ չի ասում» (Աղբբ., խաղ 52)։

«Յար, բու ճամփի հողին երեսրս քրսիմ,

Բըլքամ քիչ խղճի գաս, խոսիս դու մե բառ» (Աղբբ., խաղ 56)։

Հենց վերոհիշյալ խաղի ա տան զ տողում մի՞թե չի ասում. «Յար, քիզիդ խոսիլ իմ ուզում շահի իլթիմաղի նման»։

Երկար օրոնումները մեզ բերեցին հետևյալ եզրահանգման։ Կամ դա բար-

¹ М и л л е р, Персидско-русский словарь, Москва, 1953.

բառ. (կալ-դալ) բառն է «կտրուկ շրջվել» (Ստ. Մալխ., ՔՀայերեն Բաղաստր. բառ., հ. 2, էջ 364) կամ էլ պարսկական «դալ»-ն՝ «հիմար վիճակի մեջ գցել, անհարմար գրության մեջ դնել» (Միլլեր, էջ 326):

Կամ երգչի բարեին պատասխանելու փոխարեն «շուռ է գալիս, կտրուկ շրջվում է, երեսը թեքում» (երկու անգամ «շրջվել, շուռ գալ» բառի կրկնությամբ կամենում է ընդգծել գյուղալի անտարբերությունը), կամ էլ երգչի բարեին պատասխանելու փոխարեն «նրան անհարմար վիճակի մեջ է գցում» — այսինքն՝ չի պատասխանում բարեին: Բնական բուն. եթե մեկը դիմացինի բարեին չպատասխանի, պարզ է, որ վերջինս անհարմար վիճակի մեջ կընկնի:

Երկու դեպքում էլ տողի իմաստն այն է, որ յարը երգչի բարեին ոչ թե ղալ-մաղալով է պատասխանում, այլ պարզապես չի պատասխանում: Երկտողի միտքը այս է. «Յար, ես քեզ բարեում, իսկ դու չես պատասխանում, քանի որ — գիտես՝ խոսքդ անցնում է հայտնի շահի խոսքի շավի» (ներա խոսքին համարժեք):

ԽԱՂ 10 Բ տան Ղ տող.

«Թե էսանց էլ սուշ ունենամ՝ զլուխս արա տալ, թաքավոր,
Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի տնի»:

«Ղազաբ»-ը մեկնաբանված է «ցատում, բարկություն» (էջ 270):

Ընդհատ է, պարսկերենում բառը հիշյալ իմաստն ունի (Միլլեր, էջ 358), բայց Սայաթ-Նովան օգտագործել է «ղազաբ»-ի ոչ թե պարսկական իմաստը, այլ բարբառային: Հիշյալ բառը պարսկերենից փոխանցվելով հայ ժողովրդական խոսակցական լեզվին, իմաստային նոր երանգ է ստացել «գատ, դատաստան, պատիժ» (տե՛ս Գ. Աղեքսանդրյան, «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Թիֆլիս 1885 թ., էջ 150 և Գ. Ախվերդյան, «Հայ աշուղներ», էջ 67):

«Իմ ղազաբը իմ ձեռքով ես պիտի անեմ» («Հայ ժող. հեքիաթներ», հ. 1, էջ 294):

Սայաթ-Նովան «ղազաբ»-ը նույնպես օգտագործել է «պատիժ» իմաստով: Եթե նախորդ տողում ասում է, թե մեղք ունենամ, ինձ զխատիր, ապա հաջորդ տողում ավելացնում է. «նահախ տիղ ղազաբ մի տնի» (ինձ իզուր մի՛ պատժիր): Հիշենք, որ այս խաղը նվիրված է վրաց Հերակլ երկրորդին: Սայաթ-Նովան դա գրել է այն ժամանակ, երբ ինքը պալատականների դավադրանքի զոհն է դարձել, և Հերակլը նրան պատժել է, որոշելով մեծ երգչին վտարել պալատից և ուղարկել վանք (1753 թ.):

ԽԱՂ 13 Ղ երկարոտք տան Բ տող.

«Սիրտս փուրումս սպանեցիր, էշխտ քիզի նար(դ)իս արի:
Ինձ հուրյան բիրյան շինեցիր, աջաբ դուն էլ դարդ իս արի»:

«Նարդ»-ը հարցականով մեկնաբանված է «նարդի խաղ, նարդէ տնել (պրսկ.) վանդակապատել», իսկ տողը «սերդ քեզ համար խաղալիք ես դարձրել, կամ վանդակ ես դարձրել կամ՝ կրակ (արաբ. նար դ-ի հավելումով՝ քո)» («Ս. Ն.», էջ 304): Մշուշապատ է մեկնաբանված. «նարդ»-ը ոչ մի կապ չունի նարդի խաղի կամ վանդակի հետ. դա պարսկական-արաբական «նար» (հուր, կրակ) բառն է ոչ թե երկրորդ դեմքի դիմորոշ դ-ի հավելումով, այլ՝ հարմարեցրած «դարդ, մարդ, զարդ» հանգակալմ բառերին:

Զգացվում է, որ «քիզի նարդ»-ը պետք է լինի «քյոզի նար(զ) — կրակի շեղջի հուր» (քյոզ — ագրբ. բարբառային՝ շիկացած ածխի շեղջ)։ Որ իրոք գյո-ղալի էշխր՝ սերբ, շիկացած ածխի հուր է, հուշում է հաջորդ տողը՝ «Ինձ հուր-յան բիրյան արեցիր» (ինձ վառեցիր, խորովեցիր)։

Ի դեպ «Հայ աշուղներ» գրքում նույնպես հանդիպում են «քյոզ» բառին՝ վերոհիշյալ իմաստով (էջ 459)։

ԽԱՂ 14 ր տան ա տող.

Յար, էտ քու նազ ու ղամզով ջանքս փուլ ու փանդ իս արի։

«Ղամզ»-ը մեկնաբանված է «նազով, աչքով ունքով խոսել, աչքով անել, բամբասել» (էջ 298)։

«Ղամզ» ձևով պարսկերեն կան երեք տարբեր բառեր՝ ղամեզ (մութ, ան-հասկանալի), ղամզ (մեղադրանք, զրպարատանք) և ղամզ (կոկետ հայացք)։

Այս երեք տարբեր իմաստներից պետք է որևէ մեկը ընտրել և ոչ թե երե-քը իրար միացնել։

Հեղինակը մեզ պարզ հուշում է «նազ ու ղամզ»։ Ուրեմն «նազն ու ղամզը» համանիշ բառեր են, որ երգիչը համադրել է ու շաղկապով։ Հետևաբար, պետք է ընտրել «ղամզ»-ի՝ «կոկետ հայացք» իմաստը։ Գ. Ախվերդյանը տվել է գեղե-ցիկ մեկնաբանություն՝ «պշրելով հալի» («Գուսանք», Ա., էջ 83)։

Գյոզալը իր նազով ու պշրանքով («նազ ու ղամզով») երգչի «հոգին» «փուլ ու փանդ է» արել — հոգեկան աշխարհը տակն ու վրա է արել (փուլ ու փանդ — ավերել, քանդել)։

ՆՈՒՅՆ տան ա տող.

«Խաթրով, խալով, քաղցր լիզվով շատ ինձ պեսին բանդ իս արի»։

Խաղի վերաբերյալ ծանոթագրությունից (էջ 239) իմանում ենք, որ «խաթ-րով» բառը գրված է Դավթարում «խաթրով», որը Գ. Ախվերդյանը կարդացել է «խաթու» («Ս. Ն.», էջ 239)։ Իրոք, տողիմաստը մեզ թեկադրում է, որ բառը պետք է կարդալ «խաթու» և գրել միասին՝ «խաթուխալով» (խաթուխալ — պրսկ. «սիրուն դիմագիծ»)։

Գյոզալը ոչ թե «բարի, քաղցր տրամադրությամբ (խաթր) և խալով է հմա-յում երգչին» (ինչպես ենթադրում է Մ. Հասրաթյանը), այլ իր սիրուն դեմքով (խաթուխալով) և քաղցր լիզվով։

Ի դեպ, այս ակնառու աղավաղված գրությունը մեզ բերում է այն համոզ-ման, որ խաղի բնագիրը եղել է հայատառ, «խաթու»-ի երկճյուղ ու-ն կարդաց-վել է ու՛ (հին ուղղագրությամբ՝ ներկայիս «վ» տառը գրվում էր «ւ»)։

Ի միջի այլոց նշենք նաև, որ հիշյալ տան և տողը անփութության պատճա-ռով չկա, դուրս է մնացել, ինչպես 1963 թ., այնպես էլ 1959 թ. հրատարակու-թյունից։ Պետք է վերականգնել։ Տողը եղել է.

«Տուր դանակըն ինձ սպանե, մի ասա րիշխանդ իս արի»։

ԽԱՂ 15 գ տան ո տող.

«Մե բիռն ենգիդունյա է, մե բիռն՝ փաշայի խալաթ»։

«Փաշայի»-ն մեկնաբանված է «փաղիշահ թագավոր» (էջ 317)։

Դա «փարշայի» բառի աղավաղված գրությունն է (Բ-ն սղվել է)։ «Փարշան» և «ենգիդունյան» կտորի տեսակներ են։ Երգիչն ասում է, որ ինքը հեռու տեղից եկել է, մի բեռը «ենգիդունյա» կտոր է, իսկ մյուսը «փարշայի խալաթ է»՝ մե-տաբայա կտորից նվերներ։

«Ենգիդունյա» բառի մասին։

Ենդիդունյա բառը Սայաթ-Նովան օգտագործել է երկու իմաստով՝ 1. կտորի տեսակ և 2. նոր աշխարհ, Ամերիկա: Երկրորդ իմաստի կապակցությամբ Ս. Հասրաթյանը այն կարծիքն է հայտնում, որ բառը «հավանաբար բուն բնադրում առանց զ-ի է եղել՝ ենի դունյա նոր աշխարհ, Ամերիկա»:

Ենդիդունյան ոչ թե աղբեղաներենից է փոխառված, այլ պարսկերենից «յանգի գոնյա — նոր աշխարհ, Ամերիկա» (Միլլեր, էջ 605): Որ դավթարում բառի մեջ աղավաղում չկա, մեջբերենք աշուղ Նալբանդ-Օղլուց մի հատված՝ «Քու տեսակն ոչ ով չըկա,

...Ենգի դունյա չի ճարուի» (Ախվերդյան, «Հայ աշուղներ», էջ 489): Մեզ թվում է, որ Ենդիդունյա (Ամերիկա) բառից է հենց առաջացել «ենգիդունյա» կտորի տեսակը, որը և հետագայում կոչվել է «ամերիկե, ամիրկա» (սպիտակ բյազ): Ինչու է ենք այդպես կարծում: Պարսկերենում Ամերիկա աշխարհամասը արտասանվում է «Ամրիկե», իսկ այդ նույն բառը որպես հասարակ անուն՝ կտորի տեսակ, Գ. Սունդուկյանը այսպես է մեկնաբանում.

«Ամերիկա (ամրիկա) — բամբակյա գործվածք, բյազ» (Գ. Սունդուկյան, Երկեր, հ. 4, էջ 67): Ամրիկա կտորը այժմ մեր բարբառներում դարձել է ամիրկա (սպիտակ բյազ):

Հավանաբար ենդիդունյա-ամերիկա, ամիրկա կտորը այդպես է կոչվել այն պատճառով, որ սկզբնական շրջանում վաճառականները բերում էին «ենդիդունյայից» — Ամերիկայից:

ԽԱՂ 19. ա տան ա տող.

«Ձենրտ քաղցր ունիս, լամզով կու խոսիս»:

«Լամզ»-ը այստեղ «ակնարկով, շարախոսությամբ, քողարկված ձևով խոսելու» («Ս. Ն.», էջ 290) իմաստով չի օգտագործված, այլ «առնուշ խոսվածք» իմաստով, ինչպես ձիշտ մեկնաբանել է Գ. Ախվերդյանը («Գուսանք», Ա., էջ 89): Դա պարսկերեն «ղամզ»-ը չէ, այլ թիֆլիսահայ բարբառի «լամզ»-ը:

Եթե գյողալի ձայնը քաղցր է, ապա պարզ է, որ քաղցր, հաճելի էլ կխոսի: Սունդուկյանը նույնպես օգտագործել է հիշյալ բառը «հաճելի խոսվածք» իմաստով:

«Խոսկ ու ջուղաբղ լավ, լամզդ լավաթի» (Գ. Սունդուկյան, Երկեր, հ. 2, էջ 377): Երգչի վերոհիշյալ տողը ընկալվում է. «Ձայնդ քաղցր է, դուրեկան, հաճելի ես խոսում»:

ՆՈՒՅՆ խաղի դ տան դ տող.

«Մովեմեն դուս եկած դարա իս, գոզալ»:

«Ջարա»-ն մեկնաբանված է «մանրագույն հատիկ, մասնիկ, ակն» («Ս. Ն.», էջ 286):

Պարսկերենում «զարա» (զարե) իրոք նշանակում է «մոլեկուլ, ատոմ, մանրագույն մասնիկ», բայց մի՞թե հիշյալ իմաստից կարելի է հետևեցնել ակն:

Գ. Ախվերդյանը դա համարել է անմեկնելի բառ, չմոռանալով ավելացնել, որ «էզար» նշանակում է ծաղիկ («Գուսանք», Ա., էջ 89):

Քանի որ երգիչը նախորդ տողում դյուզալի աչքերը համեմատում է ծաղիկների հետ («կարմիր վարթ», «տուխտ») և բացի այդ «զարա»-ին որակում է «ծովեմեն դուս եկած» արտահայտությամբ, ապա հակված ենք կարծելու, որ «զարա»-ն այստեղ ծաղիկ իմաստով է («Ջարե» — ծովային ծաղիկ, բույս — անծանոթ ցեղի — Ստ. Մալխասյան, «Հայ. բացատր. բառարան», հ. 2, էջ 12): Երգիչը «զարե»-ն հանգի պահանջով հարմարեցրել է նախորդ տների հանգա-

կազմ «խարա» և «սիրա» բառերին: (Կ տան «մարէ» բառը նույնպէս հանգի թելադրանքով՝ բարեհնչունության համար դարձրել է «մարա» — հեքիաթային օձի գլխի անգին քար):

Երգիչը «ծովեմեն դուս եկած՝ ծովային ծաղիկ» պատկերավոր արտահայտությունը օգտագործել է նաև հայերեն 2-րդ տողում՝ «նովափար — ծաղիկ ծովային»: Նույնանման մակդիր-համեմատության մենք հաճախ ենք հանդիպում մեր միջնադարյան մյուս տաղերգուների մոտ:

«Մառ նարնջենի, ծաղիկ ծովային,

Դու սելվի շինար, տունկ բալասանի» (Գր. Աղթամարցի, «Տաղեր», էջ 244):

«Ա՛յ իմ նունուֆար ծաղիկ, որ ջրրին մեջըն դու կենաս» (Քուչակ, «Հայրենի կարգավ», էջ 97):

«Նունուֆար ծաղիկ եղիր, որ ծովուն հատակն երևի,

Հազար աշք ի քեզ նայի, հազար ձեռք ի քեզ շրհասնի» (Քուչակ, նույն տեղում, էջ 43):

Սայաթ-Նովան նույնպես իր գլուղային համեմատում է ցողաթաթախ, թարմ ու զեղեցիկ ծովային ծաղկի՝ «ղարա»-ի հետ («Զարա» բառից ունենք խաղաղար՝ «կակաշ ծաղիկ», Գյուլիզար (վարդ ծաղիկ)։ Վարդաղար (վարդ ծաղիկ) անձնանուններ):

ԽԱՂ 22 և տան Կ տող.

«Հում կաթնակիր-Աթամի դաթ, նալաթ քու էյթիբարին»:

«Հում կաթնակիր» արտահայտությունը չի մեկնաբանված. Ա. Քոչոյանը մեկնաբանել է «անագնիվ, տմարդի անձ» («Ս. Նովայի հայերեն խաղերի բառարան», էջ 98): Երգիչը այդ արտահայտությունը օգտագործել է նաև հայերեն 18-րդ խաղում:

«Սայաթ-Նովեն ասաց՝ շատ ջանք դրի,

Մե բափա չը տեսա հում կաթնակիրի»:

Վերոնշյալ արտահայտությունը ժողովրդական շաղախ ունի, հայկական ժողովրդական հեքիաթներում հաճախ ենք հանդիպում նույնանման դարձվածներին՝ «Աղամավուրթու մեջը բափա չըկա» (բափա—հավատարմություն), «դրուստ որ հում կաթնակիրին էյթիբար չըկա»: Այդ հեքիաթների բովանդակությունից գալիս ենք այն եզրակացության, որ «հում կաթնակիր» ասելով՝ պարզապես հասկացվում է «մարդ արարած»։ Զէ՛ որ երգիչը հենց ինքն է այդ բացահայտում՝ «Հում կաթնակիր՝ Աթամի դաթ, նալաթ քու էյթիբարին»:

Մարդ արարած, Ադամի որդի-Ադամորդի, անեծք քո վստահությունը:

Այժմ համառոտակի շարադրենք երկու հեքիաթ, ցույց տալու համար, որ, իրոք, «հում կաթնակիր» և «Աղամի դաթ»-ը՝ Ադամորդին, նույնանիշ բառեր են:

«Աղամավուրթու մեջը բափա չըկա» հեքիաթում մի մարդ անտառով գնալիս, հանկարծ նկատում է, որ մի ծառի տակ կրակ կա, կրակի մեջ մի արկղ է վառվում, իսկ արկղի միջից աղիոդորմ ձայն է լսվում: Այդ մարդը արկղը հանում է կրակից, բացում: Միջից մի օձ է դուրս գալիս և վաթաթվում մարդու պարանոցով, օձը սկսում է մարդուն խեղդել: Այն հարցին, թե ինչու է իր փրկիչի նկատմամբ այդպես վատ վարվում, օձը պատասխանում է. «Հում կաթնակիրի մեջը բափա չըկա»: Իսկ այդ նույն հեքիաթի վերնագիրն է «Աղամավուրթու մեջը բափա չըկա» (Գ. Տեր-Աղեքսանդրյանց, նշվ. աշխ., էջ 379):

Ուրեմն՝ «Հում կաթնակիրի մեջը բափա չըկա» և

«Աղամավորթու մեջը բափա չըկա»

տողերը նույնիմաստ են, նշանակում է «մարդ արարածի մեջ վստահություն չկա՝ մարդը վստահելի չէ»:

«Հավատարիմ կինը» հեթիաթում մի առևտրական անտառով անցնելիս նրկատում է մի գլխատված կնոջ, որի բերանից անմահական աղբյուր է ցայտում: Ինչդ կինը առաքինի կին էր. ամուսինը իր շար եղբոր զրպարտությունը հավատալով, անտառում գլխատել էր իր կնոջը: Առևտրականը կարողանում է այդ անմահական ջրով կենդանացնել գլխատված կնոջը: Երբ կինը աչքերը բանալով և իր դիմաց օտար մարդ տեսնելով դեմքը գլխաշորով ծածկում է, վերջինս ասում է.

«Դրուստ որ հում կաթնակիրին էյթիբաբ չըկա, ևս կսքան շարշարվեցի, աղատեցի քեզ, հիմի դու ինձնից երեսըտ պահում իս» («Հայկ. ժող. հեթիաթներ», հ. 1, էջ 550):

Ինչպես ակնհայտ երևում է, «հում կաթնակիրը» ոչ թե «տմարդի, անաղենիվ մարդն է», այլ սլարդապես՝ մարդը: Ինչպես որ ժողովուրդը ասում է, «մարդը սխալակա՛ն է», այնպես էլ ասում է. «մարդը վստահելի չէ», «մարդու մեջ հավատարմություն չկա»:

Եթե Սայաթ-Նովան աղբր. խաղ 62-ում կրկնում է այդ, ասելով.

«Այս աշխարհը ընդունայն է,

Անեծք մարդու էյթիբարին»,

ապա աղբր. խաղ 31-ում նույն միտքը ավելի է խորացնում. «Զրհավատաք, աշխարհը էյթիբար չունե՛ս: Այսինքն՝ ոչ միայն մարդուն չի կարելի վստահել, այլև աշխարհին:

ԽԱՂ 23, վերջին տան գ և դ տող.

«Փռանգստանու միշեն էլած՝ զար ատլաս իմ, Սայաթ-Նովա,

Ծալե դավթարբա, դութին դի՝ բանգ ու բուքար իմ քիզ համար»:

«Բուքար» բառին տված է երկու տարբեր մեկնաբանություն. 1. գործվածքի ձևերը, ծայրերի չգործված հենքի նուրբ փնջերը: 2. Հույս, ապավեն (պարսկ. «բույ» բառից), իսկ տողը մեկնաբանված է. «երգարանդ ծալիր և սնդուկը դիր, անհույս սիրո երգեր մի երգիր, որովհետև հույս ու ապավեն ևմ քեզ համար» (Ս. Ն., էջ 316):

Գ. Ախվերդյանը «բուքար»-ը մեկնաբանել է «գործվածքի առավել աշխատունակ ու գործած ծայրը»:

«Բուքար»-ը գործվածքի ծուպն է, դա կարող է գործվածքի հենքի թևերից շինել, տարբեր արտագրություն լինել: Հիշենք երգչի հետևյալ տողը՝ «ծըպնիրը Հինդն է բանգ արիլ, գործվածքը՝ Շամ շրհարը» (աղբր. խաղ 50): Որ իրոք վերոնշյալ տողի «բուքար»-ը կապ չունի «հույս, ապավեն» իմաստի հետ, այլ գործվածքի առավել աշխատունակ ու գործած ծայրն է, ծուպը, մեզ հուշում է նախորդ տողի «զար ատլաս»-ը: Եթե նախորդ տողում գլոգալն ասում է, որ ինքը եվրոպայից բերված ոսկեհուռ ատլաս է, ապա հաջորդ տողում ավելացնում է, որ այդ ոսկեհուռ ատլասի «բանգ-ու-բուքարն է» (պարսկ. իվաֆեով միացած), փայլուն, դունավոր դարդավունջն է («բանգ» բառը պարսկերենում բացի «զույն» իմաստից նշանակում է նաև «փայլ»): Համանման մակդիր-համեմատություն ունի Քուշակը: «Հա՛յ, իմ արծաթե գուրա, մարբրրաի ծաղկոցն ի վրա» (Քուշակ, «Հայրենի կարգավ», 1957 թ., էջ 210): Եթե Սայաթ-Նովան իր գյո-

զալին համեմատում է սնդուկի գունավոր, փայլուն դարդափնջեր ունեցող ոսկեհուն ատլասյա ծածկոցի հետ, ապա Քուչակը իր սիրուհուն համեմատում է արծաթե սունդուկի (գուբա) մարգարտադարձ ծածկոցի հետ:

ԽԱՂ 25 Բ տան դ տողի «Սամանդար» բառը գրված է շղատառով, համարվում է անմեկնելի բառ: Պատճառը մի տառի աղավաղված լինելն է, պետք է լինի «Քամանդար» — աղեղների ունեցող, աղեղնակիր (ադրբ.): Գյուղալի ունեցերը երգիչը համեմատում է աղեղների հետ: Հիշենք երգչի «Մուցդ բաղ, ունրիրատ քաման» տողը (հայերեն խաղ 27): «Քամանդարիտ» բառի Ի տառի և դառնալը մենք բացատրում ենք նրանով, որ խաղի բնագիրը եղել է վրացախառն հայերեն տառերով (ինչպես Դավթարի էջ 127-ի «Դարդ մի անի ջան ու ջիգար» խաղը: Արտագրողը հայերեն Բ-ն շփոթել է վրացերեն ա-ի հետ (խակ այդ երկու տառերը գրությամբ համարյա նույնն են՝ Բ, Գ):

ԽԱՂ 29 Ե տան և տող. «Հաթիլ իս ատլաս, թուրլու զար ու խաղ, սալբուզ զալ բովուն» տողի «բովուն»-ը ոչ թե «բոյ» բառն է հարմարեցրած հանգակազմ «նովուն» և «քովուն» բառերին, այլ պարսկերեն «բովան, բավան» (սահուն, քալող) բառի աղավաղված ձևն է: «բովան-բովուն» բառը արտագրողի կողմից թյուրիմացաբար դարձել է «բովուն»: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ Սայաթ-Նովայի խաղերի բնագիրը եղել է հայատառ (հայերեն Բ-ն կարդացվել է Բ): Երգչի գյուղալը սալբու սահող, օրորվող ճյուղ է (ձկուն է, դյուրաթեք): Ի դեպ, նույնանման պատկերավոր համեմատություն ունի Քուչակը: «Քո մեջքոն է բարակ, էրկայն և սլոյիկրտ է սալրի բովան» («Հայերենի կարգավ», էջ 89):

ԽԱՂ 34 Բ տան և տող. «Մե-մեկ, մե-մեկ էլ չի ասվի՝ թարիփրտ դառավ քուլիչով»: «Քուլիչով» Գ. Ախվերդյանը մեկնաբանել է «քսանյակ» (ադրբ.), Մ. Հասարաթյանը՝ «լրիվ, ամբողջական, անհաշիվ», իսկ տողը՝ «գովթոգ դարձավ աշխարհով մեկ» («Ս. Ն.», էջ 319):

«Քուլլու» բառն է ամբողջական նշանակում՝ «Քուլլու քաղաքի մեջ շատ սիրեկան իս, գովելի» (Գ. Ախվերդյան, «Հայ աշուղներ», էջ 315), իսկ «քուլիչով»-ը, իրոք, «քսանյակն է», այն էլ՝ «դյուծինը»: Ադրբեջանցիները «քսանյակ» ասելով հասկանում էին «մեկ դյուծին»: Այդ հավաստում է նաև Գ. Սունդուկյանը. «Քուլիչով-քսանյակ, դյուծին: Նրկոտասուն հավասար է մեկ դյուծին» (Բ. Սունդուկյան, Երկեր, հ. 2, էջ 635):

Սայաթ-Նովան ուզում է ասել, որ գյուղալի գովքը մեկ-մեկ (նորից է կըրկնում բառը), մեկ-մեկ չի ասվի (այնքան շատ են նրանք), այլ պետք է դյուծին-դյուծին ասել (այնքան հմայքառատ է նա):

ԽԱՂ 35 Ե տան դ տող. «Թե խամ հագ-նիս, թե զար հագնիս, կու շինիս դումաշ, նազանի»: «Զար»-ը ըստ սայաթնովազետ Մուշեղ Նարյանի նշանակում է «հասարակ կտոր»: Մ. Նարյանը վկայակոչում է Հր. Աճառյանին և Ստ. Մախասյանին: Սակայն Մախասյանի բառարանում գրված է. «Զար — հասարակ կտորից ձերմակ սավան, որով կանայք փաթաթվում են, անից դուրս դալիս» («Հայերեն բացատր. բառարան», հ. 2, էջ 11):

Պրոֆ. դոկտոր էդ. Աղայանը նույնպես «Զար»-ը (իդրթէ) մեկնաբանում է. «Քաթանե կամ մետաքսե գործվածք, որով տրաք կանայք փողոց են դուրս գալիս» («Հազար ու մի գիշերներ», էջ 64): Հետևաբար՝ «դար»-ը ոչ թե «հասարակ կտոր» է, այլ՝ սովորական ման ծածկոց, որը կարող է լինել ինչպես հասարակ կտորից, այնպես էլ մետաքսյա կտորից (նայած թե կինը աղքատ է, թե

հարուստ)։ Նազանի գյուղավր «զար» (շագրա, շարսավ) երբեք չեր հաղնի, որովհետև վրացուհիները վար հագնելու սովորություն չունեին։

Վերոնշյալ տողի «զար»-ը «ոսկեթել, ոսկեթելով նախշած» զգեստի իմաստըն ունի։ Տողը նշանակում է «նազանին թե խամ հագնի (անզարդ, հասարակ), թե վար՝ պարզանախշած, ընտիր, երկու դեպքում էլ հագինը թանկագին կտորի՝ զուլաշի տեսք է ունենում։ «Զարն» ու «խամը» այստեղ ոչ թե նույնանիշ բառեր են, այլ հակառիշ (խամ ու խամ՝ վար)։ Որ երգիչը իրոք «զար» ու «խամ» բառերը հակադիր իմաստով է օգտագործել, հիշենք երգչի հետևյալ տողերը։ «Հին քարխանի վար ու վարբար, ինձ ամա քու խամն իմ ուզում» (վրաց. խաղ 20)։ «Զունքի վարի գինը շունիմ, էնդու խամի համար էկա» (վրաց. խաղ 15)։ «Խամը թող տու, աբրեշում ու խաս տանի» (Ադրբ. խաղ, 25)։ Բերված օրինակներից ակնբախ երևում է, որ երգիչը «խամ»-ին միշտ հակադրել է «զար»-ը — հասարակ կտորին հակադրել է ընտիրը, վարդանախշածը։

ԽԱՂ 38 գ տան Բ տող. «Տարենը մե գամ բաց կուլիս, մաթաճ շահրադել բաղարի»։ «Շահրադել»-ը Գ. Ախվերդյանը մեկնաբանել է «տոնավաճառ», Մ. Հասրաթյանը հարցականով գրել է «Դուշե» շահր՝ քաղաք ու դիլ՝ սիրտ բաներից է» (Ա. Ն., էջ 305)։ Մեր կարծիքով, «շահրադել» բառի տակ թաքնված է քաղաքի անուն։ Հիշենք երգչի հետևյալ համանման տողը «Դուն Մարանդի շեն բաղար իս»։

«Շահրադել» նշանակում է «Դելի քաղաք՝ շահր-օ-Դել» (պարսկ. իզաֆետով միացած)։ Տողի շափը շխախտելու, ինչպես նաև բարենշունություն համար նա 'Դելի բառի Ի-ն սգել է։ Սայաթ-Նովան իր գյուղալին համեմատում է 'Դելի քաղաքի ընտիր ապրանքի հետ («Մաթաճ շահր-օ-Դել բաղարի»)։ Երգիչը «Հընդկաստանի կենտրոն» արտահայտությունը օգտագործել է նաև 15-րդ խաղում «Հընդու միշեմեն դուս էկած դիմեթով մաթաճ իմ բերի»։

ԽԱՂ 44 Բ տան Գ տող. «Թեզուզ վար վարբար հագցընիս, վուր չըլի ասրլ-ջաղեմեն»։ «Ասրլջաղեմեն»-ը Դ. Ախվերդյանը մեկնաբանել է «քաջատոհմիկ», Մ. Հասրաթյանը՝ «իսկական ճիշտ ուղի» (Ա. Ն., էջ 279)։ Բառը աղավաղված է, եղել է «ասրլջաղեմեն» (Գ-ն ջ է դարձել)։ Այս ես մեկ անգամ վկայում է, որ 'Իավթարի խաղերի մի մասի բնագիրը եղել է հայատառ։ Հայերեն ձևագիր Գ-ն հեշտությամբ կարելի է շփոթել Գ-ի հետ։ «Ասրլջաղա» պարսկ. նշանակում է «ազնիվ ծագում ունեցող, ազնվացեղ» (Միլլեր, էջ 28)։ Տողը նշանակում է. «թեզուզ ոսկեհուռ շորեր հագցնես, որ մարդ ի ծնե բարեկիրթ չլինի, ազնվավարմ չլինի, ինչ օգուտ»։

ԽԱՂ 46 Բ տան Գ տող. «Էրեսըտ խասա մուրասա-դալամ քաշիլըն ի՛նչ կոնե»։ «Խասա մուրասա»-ն մեկնաբանված է «նուրբ գործվածք, մուսլին, վարդարած ոսկեթելով կամ անդին քարերով» (Ա. Ն., էջ 292)։ Երգիչը գյուղալի երեսը գործվածքի հետ (թեզուզ և անգին քարերով վարդարված) չէր համեմատի։ «Մուրասան» պարսկ. նշանակում է նաև «նկարված» (Միլլեր, էջ 453)։

Երգիչը, դիմելով գյուղալին, ասում է «գեմբգ (առանց այն էլ) ընտիր նկարված է («խաս-ա-մուրասա»), նորից «դալամ քաշիլըն», նորից նկարելը պետք չէ»։ Նույնանման արտահայտչական ձևի մենք հանդիպում ենք նաև ժողովրդական խաղիկներում. «Յարրս դալամ քաշած ս, դալամ քաշիլըն ինչ կոնե» (Մ. Աբեգյան, «Ժող. խաղիկներ», էջ 226, 1940 թ.)։

ՆՈՒՅՆ խաղի Գ տան Գ տող. «Սկանդարի Զուլդարեն թողած ջընաղ հեքալ արմանալու»։

«Ջրնաղ»-ը մեկնաբանված է «անրակ, կրծքի ոսկոր», իսկ «ջրնաղ հեքալը»՝ կիսանդրի, կիսարձան («Ս. ն.», էջ 296):

«Հեքալ»-ը փոխառյալ բառ է, եթե պարսկերենում իրոք «արձան, կառույց-վածք» իմաստն ունի, ապա անցնելով մեր խոսակցական լեզվին, իմաստային այլ երանգ է ստացել՝ «ուլունք, մանյակ, վզի շտր» (տե՛ս Գ. Ախվ., «Հայ աշուղներ», էջ 517, ինչպես նաև «Հայ աշուղներ», 17—18 դդ., էջ 315):

«Սամերգ ուհան է, սուսամբար,

Ծոցետ հոտ կուգայ մուշկի ամբար,

Վզետ կախել ես հեքալ, զամբար» (Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, 1951 թ., էջ 6):

Որ իրոք մեծ երգիչն էլ է իր խաղում «հեքալ»-ը օգտագործել «մանյակ, վզի շտր» իմաստով, մեղ հուշում են ինչպես նախորդ տողը «Անգին յաղութ, ան-դին ալմաս, բուրբուրտ ջահավիր շարած», այնպես էլ «Սկանդարի Զուլդարեն թողած ջավահիր իս, անգին լալ իս» տողը: (Հայ. խաղ, 34): Եթե նշյալ 34-րդ խաղում երգիչը գյոզալին համեմատում է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակից մեղ հասած թանկագին քարերի հետ, ապա վերևի տողում համեմատում է գոհարազարդ մանյակի հետ («ջնաղ հեքալ»):

Գուցե՞ «ջնաղ»-ը բնագրում եղել է «զնաղ», «ծնոտ» (տես «Հայ աշուղներ», 17—18 դդ., էջ 440): Վրաց արքայազուստրերը սովորություն ունեին մարգարտ-յա ուլունքաշար անցկացնելու իրենց ծնոտի շուրջը:

ՆՈՒՅՆ խաղի ու տան գ տող. «Խաբավորի թագի ջիղայ օսկե թիլըտ շաղ-աղում իս»: «Ջիղա»-ն մեկնաբանված է «թագ, պսակ, թագի վրա դրվող ջայ-լամի փետուր» («Ս. ն.», էջ 319): Տողը չի մեկնաբանված:

«Ջիղա»-ն մեր աշուղները օգտագործել են «շահի թագի ադամանդյա պար-պարանք»-ի իմաստով (տես Գ. Ախվ., Հայ աշուղներ, էջ 521):

Սայաթ-նովան գյոզալի գլխի թանկագին քարերով զարդարված ոսկե թելը (վրացուհիները սովորություն ունեին իրենց ճակատի շուրջը կապելու ոսկե կամ արծաթե պսակած թիթեղ՝ մուղայիչ) համեմատում է թագավորի ադամանդա-կուռ թագի հետ, որը «շաղմադում է»՝ կայծկլտում, շողշողում է:

ԽԱՂ 47 ա տան ա տող. «Աչկ ու ունքըտ վեր իս թողի, հուքմըտ մե ոուս ցարի բաբաթ»: Երգչի որդու՝ Օհանի ձևագրում հիշյալ տողը գրված է «Հուք-մըտ մե րուս չարի բաբաթ»: Մ. Հասրաթյանը «մե րուս»-ը դարձրել է «մե ոուս», իսկ «չարի»-ն, ենթադրելով թուրքերեն «ցար» բառի «չար» արտասա-նությունը, դարձրել «ցարի»: Լստ նրա, տողը նշանակում է «Հրամանդ մի ոուս ցարի նման» («Ս. ն.», էջ 248):

Սայաթ-նովան իր խաղերից և ոչ մեկում չի հիշատակում «ոուս ցար» ար-տահայտությունը: Տողիմաստը հիշտ հասկանալու համար անհրաժեշտ ենք հա-մարում տալ յուրաքանչյուր բառի մեկնաբանությունը: Կատարելով որոշ սրբա-պրումներ:

1. «Հուքմըտ» բառը պարսկերեն-ադրբեջաներեն «հոքմ» — «ուժ, իշխա-նություն»-ը չէ, այլ «հոգի» բառի ներգոյական հոլովը՝ «հոքումտ» (հոգուդ մեջ):

2. «Մե րուս»-ը աղավաղված է, պետք է գրել միասին և այն էլ կ-ով՝ «մե-րուկ», որը նշանակում է «կապված» (Ստ. Մալխասյան, «Հայերեն բացատրա-կան բառարան», հ. 3, էջ 317): «Մերուկ»-ի «Մերուս» դառնալը ևս մեկ անգամ ասպարեցում է, որ երգչի Գավթարի բնագիրը գրված է եղել հայատառ: Հայե-

րեն և և կ տառերը գրություններում են: Արտագրողը բառի իմաստը չհասկանալով «մերուկ»-ը դարձրել է «մերուս»:

3. «Բաբաթ»-ը ոչ միայն «տեսակ, նման» է նշանակում, այլև՝ «մի տեսակ»: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառով երբ ասում են. «Աչքիս բաբաթ ռանգ-ռուշտ տեղը չի» — այդ նշանակում է. «Աչքիս մի տեսակ գույն-մույնդ տեղը չէ» կամ՝ «բաբաթ աչքիս տվա-բույա ես բրեւում», նույնպես «բաբաթ»-ը «մի տեսակ» իմաստով է:

4. «Զարի» բառը ոչ թե «ցար-չար» բառի սեռական հոլովն է, այլ՝ «անել» բայի անցյալ կատարյալի ժխտ. ձևը՝ չարեցի-չարի:

Տողը ընկալվում է հետևյալ կերպ՝ «հոժոռուել ես, ունքերդ կիտել ես, հոգուդ մեջ չկապվեցի (իմ ու քո մեջ հոգեկան կապ չստեղծվեց), դրա համար էլ նայում ես ինձ մի տեսակ շար»: Հաջորդ տողը նույն մտքի շարունակությունն է «Աջաք քեզ ի՞նչ գեթ իմ արի — խոսում իս դուն շարի բաբաթ»: Արդյոք ես ինչ մեղք եմ գործել, որ շարի նման ես նայում, շար ես նայում ինձ:

ԽԱՂ 53 Ա. տան ա տող.

«Աշխարհս մե փանջարա է, — թաղերումեն բեղարիլ իմ»: «Թաղը» մեկ-նաբանված է «կամար» (գոան, պատուհանի), իսկ տողը՝ թաղերից, թաղակապ պատուհաններից» («Ս. Ն.», էջ 288):

«Թաղ»-ը այստեղ «կամար» իմաստով չէ, այլ «պատուհան» (պրակ. թաղե-պատուհան, Միլլեր, էջ 332): Տողը նշանակում է «Աշխարհս մի պատուհան է, և ինքը այդ պատուհաններից՝ (աշխարհից, աշխարհներից) հոգնել է (կյանքից արդեն ձանձրացել է): Որ իրոք «փանջարա»-ն և «թաղ»-ը նույնանիշ բառեր են, ուշագրություն դարձնենք խաղի կառուցվածքին: Երգիչը յուրաքանչյուր տողի, ինչպես և յուրաքանչյուր տան վերջին տողի հերկրորդ հատածը սկսել է նախորդ քառյակի նույնանիշով կամ հականիշով:

փանջարա	—	թաղ (պատուհան)
խուց	—	դաղ (խոց)
դուլ	—	աղա
դուլման	—	յաղի (դուլման)

ԽԱՂ 62, գ տան ր տող.

«Հոքով ու մարմնով կու սըրփիլի, ով քիզ ցուբա մոնի նման»:

«Մոն»-ը այստեղ դրաբար «մոյն-մույն-մուին»-ը չէ «կարգին, վայելուչ, վայելչակազմ» իմաստով, այլ վրացերեն «մոնա»-ն՝ ծառա, դուլ: Երգիչը դիմելով սուրբ Գեորգին, ասում է, որ ով նրա մոտ է գնում, որպես նրա հնազանդ, խոնարհ ծառան, հոգով ու մարմնով մաքրվում է (մեղքերից): Չէ՞ որ կրոնը ուսուցանում է, որ մարդիկ աստծո ծառաներն են և պետք է միշտ զոհ մատուցեն, տղոթեն, որպեսզի այն աշխարհում դրախտ դնան և ոչ թե դժոխք:

ԽԱՂ 66, վերջին երկտող. «Արութինի շախ սիրտը մեկ էլ յարա մի անի»: «Շախ»-ը այստեղ «շախ-շուխ»-ի («ուրախ, զվարճասեր» իմաստով «շախը» է, այլ «շախե-շախե»-ի (մաս-մաս արված, կտոր-կտոր արված) իմաստով «շախ»-ը (Միլլեր, էջ 202): Այլապես երգիչը ինչո՞ւ է ասում. «էս իմ խունի ցիգարս հաղար վառա մի անի» — այս իմ արյունոտ սիրտս հաղար կտոր մի անի: Կամ ինչո՞ւ է ասում. «Արութինի շախ սիրտը մեկ էլ յարա մի անի» նշանակում է, սիրտը էլի է «յարա արված» — վիրավորված: Իսկ կրկնակի վերջ տալուց անհետ ինչպե՞ս կարող է «ուրախ, զվարճասեր» լինել: Տողը նշանակում է. «Արութինի մաս-մաս արված (վիրավոր) սիրտը նորից մի՛ վերքոտիր»: